ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» հունվարի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-01/17 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի 09.01.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.01.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին սույն թվականի դեկտեմբերի 29-ին մասնակցել է Հիվանդանոցային թափոնների հավաքման, փոխադրման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2016թ թիվ 3 արձանագրության 3.2 կետում արձանագրել է, որ Ընկերության ներկայացրած հայտում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝

1. լրացված չէ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրի օրը, ամիսը և ամսաթիվը,

2. հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի արժույթը բառերով նշված չէ, այնինչ վճարման պահանջագրի լրացման կարգի համաձայն՝ հայտի ապահովման գումարի արժույթը բառերով վճարողի կողմից լրացվում է նախապես:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի, եթե հայտը ներկայացվել է լիազորված անձի կամ գործակալի կողմից, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն նշել է, որ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվել է լիազորված անձի կողմից, սակայն վերջինիս կողմից որևէ անձը հաստատող փաստաթուղթ չի ներկայացվել:

Ընկերությունը նշել է նաև, որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի թիվ 168Ն որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, Ընկերություն խնդրել է՝

1.դադարեցնել Ընկերության հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը և հայտերի վերագնահատման արդյունքում ընկերության հայտը գնահատել բավարար և ընկերությանը հաղթող ճանաչել որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի,

2. «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ գնային առաջարկում տեղ գտած անհամապատասխանության հիմնավորմամբ, ինչպես նաև հայտը ներկայացնող լիազորված անձի կողմից անձը հաստատող փաստաթուղթ չներկայացնելու հիմնավորմամբ,

3. կիրառել միջանկյալ միջոց նշված ընթացակարգի պայմանագիրը կնքելու գործընթացը կասեցնելու ուղղությամբ՝ մինչև խորհրդի կողմից սույն բողոքի վերաբերյալ

որոշման ընդունումը, քանի որ ստեղծված պայմաններում պայմանագրի կնքումը զգալի վնաս կհասցնի մեր ընկերության գործարար շահերին:

2. Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Ի պատասխան Կենտրոնի 10.01.2017թ. թիվ 01/04.1/9466-17 գրության՝ Պատվիրատուն 12.01.2017թ. թիվ 01/10-04 գրությամբ հայտնել է, որ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով Ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Էկոլոգիա Վ.Կ.Հ». ՍՊԸ-ն և «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ն: Մրցույթի հայտերի բացումը տեղի է ունեցել 2016թ. դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին: Հայտերի բացման ժամանակ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն՝ գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես՝ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրում լրացված չէր օրը, ամիսը և ամսաթիվը, և հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրում նշված չէր հայտի ապահովման գումարի արժույթը՝ բառերով, այնինչ վճարման պահանջագրի լրացման կարգի գումարի արժույթը բառերով ենթակա է պարտադիր լրացման և վճարողի կողմից լրացվում է նախապես: Քանի որ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի ապահովումը չէր համապատասխանում մրցույթի պահանջներին, գնման ընթացակարգի հրավերի 7.2 կետի 4-րդ ենթակետի համաձայն «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է և մրցույթի մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ն:

3. ԳԲԽ-01/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-01/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «***Հիվանդանոցային*** թափոնների հավաքման, փոխադրման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման» նպատակով «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» և «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ները:

3. «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում որպես ձեռբերվող ծառայության անվանում նշվել է «***Վտանգավոր*** թափոնների հավաքման, փոխադրման և ոչնչացման ծառայություն»:

4. «Էկոլոգիա Վ.Կ.Հ.»ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրում լրացված չէ օրը, ամիսը և ամսաթիվը, իսկ ներկայացված վճարման պահանջագրի 13-րդ տողում՝ «Արժույթը (բառերով և կոդով)» նշված չէ հայտի ապահովման գումարի արժույթը՝ բառերով, այլ նշված է միայն կոդը՝ AMD:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2016թ. ժամը 12^{00}-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

3.1. կետի համաձայն՝ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են Հրավերի պահանջներին համապատասխան.

3.2. կետի համաձայն՝ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են Հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝

- լրացված չէ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրի օրը, ամիսը և ամսաթիվը,

- հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրում հայտի ապահովման գումարի արժույթը բառերով նշված չէ, այնինչ վճարման պահանջագրի լրացման կարգի համաձայն՝ հայտի ապահովման գումարի արժույթը բառերով վճարողի կողմից լրացվում է նախապես:

9.1. կետի համաձայն՝ քանի որ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Հրավերի 7.2 կետի 4-րդ ենթակետի պահանջներով, որոշեց «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

11.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, նախապատվություն տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին, առաջին տեղ զբաղեցրած Մասնակից է ճանաչել «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-01/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի 09.01.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով Ընթացակարգի միջոցով գնում կատարելու հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) գտնում է, որ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի 09.01.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մասնակի բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 22.12.1999թ. N 767 «Անձը հավաստող փաստաթղթի մասին» որոշման 1-ին կետի «ա» պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում

անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են՝ ***ՀՀ քաղաքացիների համար անձնագիրը...:***

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20 մայիսի 2004թ. 131-Ն որոշմամբ սահմանվում է, որ **«Վճարման պահանջագրում մասնակցության հայտի ապահովման գումարի արժույթը պետք է լրացվի <u>բառերով և կոդով</u>»**:

Ընթացակարգի հրավերին կից «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ ***արժույթը լրացվում է մասնակցի կողմից՝ <u>բառերով և կոդով</u>:***

ա) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.12.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրում լրացված չէր օրը, ամիսը և ամսաթիվը, իսկ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրում նշված չէր հայտի ապահովման գումարի արժույթը բառերով:

«Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրի և վճարման պահանջագրի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տուժանքի համաձայնագրում լրացված չէ օրը, ամիսը և ամսաթիվը, իսկ հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագրին կից ներկայացված վճարման պահանջագրում արժույթը լրացված է միայն կոդով:

Վերոհիշյալից ուղղակիորեն հետևում է, որ «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի չեն պահպանվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20 մայիսի 2004թ. 131-Ն որոշման, Ընթացակարգի հրավերին կից «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 13-րդ կետի պահանջները, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, գործել է իրավաչափ: Հետևաբար «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը դադարեցնելու մասով Ընկերության պահանջը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

բ) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2016թ. ժամը 12^{00}-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3.3-րդ կետի համաձայն՝ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի

ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են Հրավերի պահանջներին համապատասխան:

Ահրաժեշտ է նշել, որ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «***Հիվանդանոցային թափոնների*** հավաքման, փոխադրման և ոչնչացման ծառայությունների ձեռքբերման» նպատակով «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգ, մինչդեռ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում որպես ձեռքբերվող ծառայության անվանում նշվել է «***Վտանգավոր թափոնների*** հավաքման, փոխադրման և ոչնչացման ծառայություն»:

Կենտրոնը արձանագրում է, որ Հրավերով Ընթացակարգի առարկա է հանդիսանում **Հիվանդանոցային թափոնների հավաքման, փոխադրման և ոչնչացման** ծառայության ձեռքբերումը, մինչդեռ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի գնային առաջարկի համապատասխան տողում որպես գնման առարկա նշել է **Վտանգավոր թափոնների հավաքման, փոխադրման և ոչնչացման** ծառայության ձեռքբերումը:

Վերոհիշյալ պայմաններում «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանել Հրավերի պահանջներին, ուստի Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Բացի այդ, «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ն իր բողոքում նշել է, որ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվել է լիազորված անձի կողմից, սակայն վերջինիս կողմից որևէ անձը հաստատող փաստաթուղթ չի ներկայացվել: Վերոհիշյալ փաստը, ըստ էության, հաստատվել է նաև Պատվիրատուի ներկայացուցչի կողմից, ով Կենտրոնում 13.01.2017թ. տեղի ունեցած քննարկման ժամանակ, պատասխանելով ԳԲԽ-01/17 բողոքը քննող հանձնաժողովի նախագահի հարցին, հայտնել է, որ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը իր մոտ ունեցել է ***անձնագրի պատճեն*** և իրենք համեմատել են լիազորագրի հիման վրա ներկայացած անձի և անձնագրի պատճեի նկարը:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 22.12.1999թ. N 767 «Անձը հավաստող փաստաթղթի մասին» որոշման 1-ին կետի «ա» պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ է համարվում ՀՀ քաղաքացիների համար՝ ***անձնագիրը,*** այլ ոչ թե անձնագրի պատճեն:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գնահատելով «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը Հրավերի

պահանջներին համապատասխան, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը առաջարկում է «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի 09.01.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

- դադարեցնել «ՈւԱԿ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. դեկտեմբերի 29-ի ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ՝ «Էկոպրոտեկտ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:
- մնացած պահանջների մասով «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-01/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պարանյան